Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 3-ի N 739 - Ն որոշման

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձին (այսուհետ՝ դիվանագետ) երկու օտար լեզվից բացի երրորդ և ավելի օտար լեզուների իմացության համար տրվում է հավելավճար:

2. Օտար լեզվի իմացության համար հավելավճար տրվում է այն դեպքում, երբ երեք (կամ ավելի) օտար լեզուները Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հավատարմագրման կամ գտնվելու պետության պետական լեզու են:

3. Օտար լեզուների իմացության համար հավելավճարը տրվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմում և առանձնացված ստորաբաժանումներում դիվանագետներին երկու օտար լեզվից բացի երրորդ օտար լեզվի իմացության համար՝ դիվանագետի պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի, իսկ չորրորդ և ավելի օտար լեզուների իմացության համար՝ դիվանագետի պաշտոնային դրույքաչափի 15 տոկոսի չափով:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված բոլոր լեզուների իմացությունը ենթակա է ստուգման կամ հավաստման՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի (այսուհետ՝ նախարար) կողմից սահմանված կարգի համաձայն:

5. Օտար լեզուների իմացության ստուգումն իրականացնում են այդ նպատակով ստեղծված հանձնաժողովները, որոնց եզրակացությունների հիման վրա նախարարն ընդունում է դիվանագետին հավելավճար տրամադրելու մասին անհատական իրավական ակտ: Հանձնաժողովների ստեղծման կարգը սահմանում է նախարարը:

6. Յուրաքանչյուր օտար լեզվի գծով հանձնաժողովի կազմը, ինչպես նաև սույն կարգի 2-րդ կետում նշված լեզուների ցանկը սահմանում է նախարարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14_0739